Անասունը՝ եզը, կովը, գոմեշը, ձին ծախելու ժամանակ նրա պոչից, բաշից մի քանի մազ էին պոկում՝ պահում, որպեսզի տան բարաքաթը չպակասի։ Սա մի որոշ մոգական գործողություն էր, որը բխում էր այն նախնական հասկացողությունից, որ «մասը փոխարինում է ամբողջը» և իբր մազը փոխարինում էր ծախած անասունին։ Մազը տանը պահելով՝ կարծես պահում էին և անասունին և այն արդյունքը, բարաքաթը, որը նրանից էր գոյանում տնտեսության մեջ։ Կարող է լինել և մի այլ բացատրություն, որ ծախվող անասունը տան աշխատող անդամներից մեկն էր, ծախվելուց հետո էլ այդ ազգակցական միությունից չէր հեռացվում, այլ մնում էր նրա մեջ։ Ուստի նրա հետ կապված ոգին առիթ չպիտի ունենա դժգոհ լինելու և ապագայում վնասելու։ Այն, որ անասունը համարվում էր ընտանիքի անդամներից մեկը, պարզ երևում է նրանից, որ Նոր տարվա առիթով պատրաստվող կրկէնին բաժանելիս՝ նրա բաժինն էլ էր հանվում և, եթե նրա բաժնի մեջ երևան եկավ հունցելու միջոցին կրկէնու մեջ պահած իրը, նրա բախտը կլինի այդ տարին ամբողջ ընտանիքի բարաքաթի նշանը[57]։

Ընտանիքի մեջ երկար աշխատած՝ վաստակ ունեցող եզան, կովի, ձիու սատկելուց հետո նրա գանգը դեն չէին գցում, այլ պահում էին տան առջև մի ձողի ծայրին ցցած կամ տան առջև կախած, այն ենթադրությամբ, որ նա և մահից հետո էլ շարունակում էր շահագրգռված լինել ընտանիքի բարօրությունը, բարաքաթը պահելու մեջ և իր վրա գրավելով շար աչք ունեցող մարդու ուշադրությունը, պաշտպանում էր ընտանիքը նրա հայացքի վատ հետևանքներից։ Այս կարգի սովորությունները նախնական տոտեմիզմի հեռավոր արձագանքներն էին։

Նույնպիսի շատ հին ժամանակներից հասած ժառանգություն էր, որ Զանգեզուրում և այլ հայկական գավառներում անասուն մորթելը տղամարդու գործ էր համարվում, նույնիսկ հավ մորթելն անվայել էր համարվում կնոջ համար։ Անշուշտ այդ սովորության մեջ անդրադառնում էր հասարակական զարգացման այն փուլը, երբ տղամարդը զբաղված էր գրեթե բացառապես որսորդությամբ, իսկ հաջորդ պատմական շրջանում՝ անասնապահության դարերում, կրկին տղամարդն էր հոտերը պահում և նա էր որպես տրվարածը և չոբանը, ընտրում մորթելու կենդանին և ինքը մորթում։

Նույնչափ հին պետք է համարել և այն, որ ոչխար խուզելը հովվի պարտականությունն էր։ Զանգեզուրում այդ նպատակով գործ էին ածում շատ պրիմիտիվ երկար մկրատ՝ ղերբխլը։ Ղերբխլը ներկայացնում է երկու դանակների խաչաձև միացում՝ մեջտեղը հարմարեցրած մի գամիկով, որտեղ նրանք մնում են իրար վրա, թեև հաստատապես իրար վրա չեն ամրացրած, սակայն բաց անելիս իրարից չեն անջատվում։

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Մի ժամանակ, երբ Զանգեզուրի բնակչությունը դեռ չէր բազմացած, երբ բարձրադիր մարգագետինները սակավ էին այցելվում, իսկ անտառների մեծագույն մասը պահպանում էր իր կուսությունն ու գյուղամերձ վայրերում նա դեռ չէր խրմհատված և վարելահողերի վերածված, Զանգեզուրը շատ էր հա-

[57] Մանրամասնությունները տես վարը՝ «Ժողովրդական տոները» հատվածում։